

Հայեր, իբրև որդի պիտի սիրել զձեղ, եթէ յանձն առնելք պաշտել մեր պաշտածն, ընդունելիք ազատ խնամութիւն անել մ.զ.հետ Հայ կանայք զիս ցաղներ են ծնում, Հայ արիւնը բոլոր Պարսկաստանը պիտի աղնուացնէ և քաջաց որորան պիտի գարձնէ... Միհր Աստուած, երկարացուր կեսնքս մինչ յաջողեմ տեսնել Հայեր Արեաց հետ միացած — ի մի ձուլած, տեսնել Վազարշապատում Մայր Աստուշան....

Ահա, յզյս և յօւսահատութիւն հաւասար տիրում են սրտիս Երեգակն պայծառացուր Հայաստան, լուսաւորիր Հայոց միտքը, հազար Պարսկաստան շարժէ Հայաստան, հազար մոզ և մողպես շարժէ մի տգետքահանայ, միայն թէ Մազզեզանց օրէնքն ունենայ. մի մեծ զունդ զօրք Պարսկական շարժէ մի Հայ զինւոր. մի անձանօմ Հայու հաւատարմութիւնն ու տիրասիրութիւնը աւելի մեծ է քանի իմ հարազատ որդւոցս հաւատարմութիւնը... քաջազուն Հայեր, զիւցազն Հայեր, ահ անիծւին ձեզ մոլորեցնողները, բայց սակայն . . . (յեր է +—լու—).

(Վ. Ա. Շ. Հ. Հ. Հ. Հ. Հ.)

(Աշակենակի-),

||. Գ. Հ. Ա. Կ. -

Թէ Ի՞՞նչ են նԱՅՈՒՄ ԱՄԵՐԻԿԱՑԻՆԵՐԸ ԿՐԹՈՒԹԵԱՆ  
ՀԱՐՑԻ ՎԵՐԱՅ,

Որ և իցէ տէրութեան բարձրանալուն կամ՝ կործանմանը նպաստող բոլոր պայմաններից ամենազօրեղը կրթութիւնն է. Երկրի բուն ոյժը բռվանդակումէ քաղաքացու արժանաւորութեան մէջ. Ընդարձակ հողեր, բազմաթիւ զօրքեր, իմաստութեամբ կազմակերպւած հաստատութիւններ ոչինչ են, եթէ անձները թուլանում և ստորանում են. Այսպիսի զէպքում կեանքը հետ անումէ ընկերականութենից. նա սկսումէ սակաւ առ սակաւ լուծիլ և իմաստուն ու անողոքելի օրէնքի հիմամբ զուրս է նետում այս զիակը, երիտասարդ և արգիւնաւոր տարրներին տեղի տալու համար. Աս մի Ճշմարտութիւն է՝ որևէ առաւել վերաբերումէ ուամկապետական ժողովուրդներին. Միապետութեան մէջ բաւական է երբեմն միայն մի անձի զօրաւոր կամքը և ոգին, բոլոր երկրին մի ընդհանուր շարժումն տալու համար, ընացելով որ այս փայլը վաղանցիկ է լինում: բայց կարող է շլացնել և խարել շատերի հայեացքները: Այսպէս չեն այն ժողովուրդները, որոնք իւրեանք ին իրանց կառավարում: Նոքա ոչինչ չեն անում առանց ընդհանուրի համաձայնութեան, և եթէ այս Կառավարութիւնները կատարումն մեծամեծ գործեր, մենք զօրանից այն պիտի եղակացնենք՝ որ նոքա ունեն չափազանց կենսականութիւն և իսկակտն զօրութիւն:

Ամերիկացիների այսքան կարճ միջոցում զարմանալի ձեռնարւեստութեան, քաղաքականութեան և հողային զարգացման հասնելը պարզ ա-

պացոյց է մեր տնածին։ Քայլց ի՞նչ եղանակով է կազմակերպւում և պահպանւում այս զարմանալի հասարակական ոգին։ որի շնորհով երբ կիրը հասաւ այսպիսի բարեկեցութեան և չնայելով որ մի քանի ժամանակ առաջ կրեց զարհուրելի վտանգ։ այնու ամենայնիւ նա շմռլացաւ Այս այն գերազանց կրթութեան շնորհն է որը տալիս են երիտասարդներին։ «Քաղաքացու բարեգործութիւնը և ոյժը ասումէ Աաշինդուն հասարակապետական հիմնարկութիւնների երկու անհրաժեշտ պաշտպաններ են։ Այն ընդարձակ երկիրը որին հազիւ կարելի է աստիճանացոյց համարել եւրոպան, մի քանի ժամանակ դեռ սորանից առաջ ներկայացնումէր մի տխուր բնակարան հնդիկ ցեղերի և վայրենի զուեշների Բայց այնինչ ոտք զրին այս նոր աշխարհի հողի վերայ գաղթականները որոնք ազագայում պիտի հիմնեին ամերիկեան դաշնակցութիւնը, հասկացան՝ որ այս հեռաւոր անապատների մեջ հաստատուն հիմնարկութիւններ հիմնելու համար, կրթութեան և կրօնի հաստատուն հիման վերայ հարկաւոր է յենուլ։ Այս ազատ մարդոց կամքը նոցա գեափի կեանքի ասպարեզը հրաւիրեց։ Անհրաժեշտին, մարդկային ազգի վայելունին, մի խօսքով այն բանին, որով մարդս կատարեալ մարդ է լինում, առողջ և յստակ գաղափարը հիմն զրաւ գպրոցների։ Յարգելով իւրեանց անձը, յարգելով և եկաւորներին։ յարգելով և ժողովրդեան սուրբ իրաւունքները և նորա պիտոյ քնները, ամեն ինչ եռանզով կատարեցին։ Եւ ի՞նչպէս կատարեցին։ գարշելի կծութեան հետքն անգամ չկայ այստեղ։ ուր պէտք կզգացէր զպրոցի այնտեղ ամենայն միջոցներ առատօրէն։ կհասնեին, Քոակները բաց են միշտ և զպրոցը, նայելով միշտ իւր մանկավարժական նախագծերին, կարող է որչափ և պէտքն է առնել։ նոր Անզիա գալուց միայն 25 տարի յիսոյ 1647 թուին նոքա հրամարակեցին մի օրէնք որի կարգադրութիւնները ցոյց են տալիս նոցա իմաստուն նախատեսութիւնը, Երբեկ հաւատոյ և գործունեայ մարդիկ։ նոքա աստուածային օգնութեան զիմելուց յեաոյ սկսեցին այն։ ինչ որ նոքա ցանկանումէին, ինչ որ բացարձակ յայտնեցին, այս էր ։ խլել մարդկային զեղի թշնամուց այն զենքը, որն որ նա մարդկային տղիտութեան մեջ է գտնում։ չտալ Եւրոպայից բերւած, աշխարհի սուրբ լոյսին մլժագնել և մարել։ Այս խորին կրօնական զգացմունքով տպաւորւած մտածութիւնները, սկիզբն զրին հասարակական կրթութեան ամենալզարդակ զրութեան։ Այն զարում, երբ արևմտեան ազգերը դեռ նայումէին կրթութեան վերայ իրբեկ մասնաւորների արտօնութեան։ Մասսացուզէտի օրէնսդիրները վճռեցին գաղթականութեան մեջ ամեն տեղ երիտասարդների համար ձրի գպրոցներ բանալ։ Եւրոպանչիր յիսուն տուն ունեցող զիւղ պարտաւոր էր ըստ օրինաց պահել իւր ծախքով ուսուցիչ, որը պիտի ծանօթացնէ մանուկներին առաջին տարրական գաղափարների և տեղեկութիւնների հետ։ Հարիւր տուն ունեցող ամեն մի աւան պէտքէր ուշակնական կոչած գպրոցը ունենար, ուր աշտկերտները ստանումեն հիմնական կըր-

թութիւն։ որով մինչև իսկ կարողանումն։ եթէ կամնան, մանել համալսարաններ։

Այսպէսով իւրաքանչիւր ընտանիք ամենամեծ յարմարութիւններ ունի մանուկներին կրթութիւն տալու։ բայց օրէնսդրութեան չեղինակները վախենալով մասնաւորների անհոգութենից պարտազիր արին կրթութիւնը բոլոր գաղթականութեան մէջ։ Հինգ դրվանքայ սաէրլինց, որը յետոյ բարձրացաւ մինչև 30 և մինչև իսկ 40-ի։ տուգանք դրվումէր այն ճնողներին և տէրերի վերայ որոնք «այնքան բարբարոս են» որ չեն տալիս իւրեանց մանուկներին կամ աշակերաններին կրթութեան, որը իւրաքանչիւր բանական էակի բնական օրէնքն է համարւում։

Սակայն անձնական ազատութեան յարգանքը և զէպի կանոնադրութիւնը եղած ատելութիւնը հասարակական ոգուն ընդհանրապէս թշնամական ուղղութիւն տռւին։ հակառակ այն խիստ միջոցներին, որոնց և չյապաղեցին մոռացութեան տալ։ Ամերիկացիները զգումէին այնու ամենայնիւ կարեսորութիւն լուսաւորելու ժողովուրդը։ Նոքա զիտէին, որ այն երկրում՝ ուր իւրաքանչիւր քաղաքացի մասնակցումէ ժողովրդական կառավարութեան ամրուսի տղիտութիւնը կարող է ամենակորստական չետեանքների տանել։ ուստի նոքա մեծ աշխատանք դործ դրին վտանգը խափանելու համար։

Նոցա եռանդը բնաւ չէ պակասել և այժմ։ Կառավարութիւնը ոչինչ ծախսեր չէ խնոյցում։ երբ գործը հասարակութեան կրթութեան համար է և Ա.Յ. գումարը աւելի շուտ հաստատումն քան թէ ծովայինը և պատերազմականը։ կրթութեան համար զործադրւած գումարների վերայ կարելի է գաղափար կազմել այն զէպքով, որ մի քանի նահանգներում միայն նա սպառումէ մուտքի երթորդ մասը։ Խոկ մասնաւոր անձինք ոչ միայն վճարումն տան հարկ, որոնք զուցէ այլ երկիրներում շափազանց երեկին, այլև իւրաքանչիւր օր խրեանց հաշւով հիմնումն նոր դպրոցներ։ Նոքա չեն հոգս անում նախնական կրթութեան վերայ, որովհետեւ տէրութիւնը հոգացել է արդէն նորա համար։ բոլոր նոցա ձիզը կեղրուացած է բարձր կրթութիւն տարածելու վերայ։ Այստեղ մի վաճառական զոհումէ 400.000 դոլլար (մի դոլլարը 1 մ. 35 կ.) երկու դպրոց հիմնելու համար, մէկը երիտասարդներին։ իսկ միւսը 8ինցինատայ քաղաքի օրիորդների համար, այնտեղ Պօգկիպսեցի (Poughkeepsie)։ մի գարեջուր եփով ձեմարան շինելու համար գումար է նուիրում որպէս զի կանոյք կարենան ծանօթանալ և զիտութեան ամենաբարձր ձիւղերի հետ։ ուրիշ տեղում ձեռնարւեստութեամբ հարստացող մի աշխատաւոր ընծայում Կառակ քաղաքին 500.000 դոլլար համալսարան հիմնելու համար։

Քաղաքական պատերազմի յառաջացրած թշուառութիւնները, զաշնակից զօրքի պահանջած ահազին ծախսերը, պատերազմի ժամանակ աշխատանքի գաղարումն կամ յապաղումն, որը կլլեց համարեա երկրի բոլոր կենցանի ոյժերը, այս ամենը ցոյց էին տալիս, որ կորստական ազգե-

ցութիւն պիտի ունենային հասարակութեան զպրոցների ծաղկման վերայ Քայլ ոչինչ չեղաւ: Ոչ երբէք քաղաքները այնքան առատ գումարներ չեին որոշած: ոչ երբէք զոհողութիւնները այնքան բազմաթիւ չեին եղած: ոչ երբէք քաղաքացիները չեին ցոյց տուած մեծ եռանդով ցանկութիւն պահպանելու և մինչև իսկ տարածելու ժողովրդեան մէջ այն կըրթութիւնը: որը ռամկապետական ժողովրդոց պահպանն է:

Այսպիսի մի կառավարութեան: ինչպէս մերն է: ասումէ Ավրատիոս Մանն: անհրաժեշտ է որ իւրաքանչիւր քաղաքացի իւր կրթութեամբ ընդունակ լինի իւր քաղաքական և հասարակական պարտաւորութիւնները կատարելու: դատաստանը հրաւիրումէ նորան իրրե վկայ կամ երգեւալ: հասարակութիւնը և նահանգը պահանջումէ նորա ձայնը: հարկաւոր է որ նա կարողանայ իմաստութեամբ կատարել այն բոլոր պարտաւորութիւնները: որոնք անբաժան են մեծ հասարակապետութեան քաղաքացու կոչումից:

Տէրութեան ժողովի ճարտար հոետոր Դանիէլ Աէրսոդէրը պակաս ոյժով չէ խօսում: «ամբոխի մէջ լուսաւորութեան տարածումից: ասումէ կախումն ունի մեր հաստատութիւնների ապագան: Ոչինչ վտանգ չէ կարող մեզ գալ արտաքուստ որովհեան երկրիս վերայ մեզ կործանելու չափ զօրեղ ժողովուրդ չկայ: Վտանգ եմ տեսնում ուրիշ կողմից: որից վախենումեմ: այս ժողովրդի անտարբերութիւնն է դէպի հայրենիքի գործերը: տուեք նորան կարողութիւն տեսնել շարիբը և նա կդանէ միջոց նորա հակառակ»:

Այն օրէնքները: որոնք հին աշխարհի շատ տէրութիւնների մէջ համարումին պարագոկաներ: Ամբոխիկացիների քաղաքական կազմակերպութեան հիմն են կազմում: Կատարեալ համոզւած լինելով որ եթէ մասնաւոր անձինք կարող են սխալել: իսկ բոլոր ժողովուրդը: միասին առած: քիչ անգամ է պատահում որ չէ ճանաչում իւր իսկական շահերը: նոքա աշխատումն կրթել այն քաղաքացիներին: որոնք ընդունակ են ազատութեան իւրեանց վերայ դրած պարտաւորութիւնները արժանապէս կատարելու:

Դպրոցների ընդարձակ ցանցը տարածւած է Դաշնակցութեան բոլոր հողի վերայ: Նոքա ընդունում են մանուկներ մատաղ հասակում և առաջնորդումն նոցա մինչև Ճեմարանների կամ բարձր վարժարանների դուռը: հարուստ և աղքատ: ժողովի անդամի և արհեստաւորի որդին: նատումն կարգաւ և լսումն միենայն դասերը: Յիրաւի այնտեղ հասարակութեան դպրոցները չեն գնում: միայն բաղդի խորթ որդիները ինչպէս Քրանսայումն է: Նոքա տալիս են կրթութիւն Միացեալ — նահանգների բոլոր երիտասարդութեանը: Այստեղ ամերիկացիների մէջ մարմանումն հաւասարութեան այն զգացմանը: այն յարգանքը դէպի ուրիշի իրաւունքը: դէպի ռամկապետական հաստատութիւնների այն սէրը: որոնցով նոքա միակ ազգ են դառնում տիեզերական պատմութեան մէջ:

Հարկաւս այն սկզբունքը, որի վերայ հիմնուած են ամերիկայի ժողովրդական դպրոցները, ամեն տեղի չեն յարմարւում: Խւրաքանչիւր ժողովուրդ պարտաւոր է համաձայնեցնել իւր օրենքները իւր բնաւորութեան և ոգու հետ, որն իւրեան յատուկ է, և միշտ միւնոյն կանոններին, այլ և այլ հանգամանքներում հետեւլուց իսկ աւելի վտանգաւոր ոչինչ չէ կարող լինել: Մենք զիտաւորութիւն չունինք չափաղանց բարձրացնել ամերիկացիների սովորութիւնները: բայց զարմանալի է նոցա հնարազիտութիւնը, որ կարողանումն յարմարեցնել իւրեանց հաստատութիւնները իւրեանց պահանջներին, և այս կողմից երկրայել չէ կարելի, որ նոցա դպրոցները կատարելապէս համաձայնումն նոցա կառավարութեան:

Դպրոցների այս տեսակ կազմակերպութիւնը միւնոյն ժամանակ մեծ առաւելութիւններ ունի: Կրթուելով միասին: թէ հարուստների և թէ աղքատների որդիքը, նոքա ընտելանումն մանկութենից փոխադարձար յարգելու և համակրելու միմեանց որով հասարակութիւնը պէտք չէ ունենում երբէք կուել նախանձի հետ: որը շատ յաճախ զրգուումէ կարողութեամբ տարբեր ամբոխի մէջ: Ատելութիւն և անհաւատարմութիւն զիւրաւ ծնվումն այն մարդիկների մէջ, որոնց երբէք ոչինչ բան չէ մօտեցրել: ամենօրեայ յարաբերութիւնները միմեանց հետ և հասարակական զբաղմունքները հեռացնումն այս զգացումները ամերիկացիների որտից: Աակայն նախանձու և թշնամական զգացմունքների պատճառ ի՞նչ կարող է լինել, մինչդեռ բոլոր արգելքները խափանուած են: բոլոր արտօնութիւնները ոչնչացած, այնպէս որ իւրաքանչիւրը պէտք է նեղանայ ինքն իւր վերայ, եթէ իւր զրութիւնը ստոր է ուրիշների զիւրեմենից:

Միացեալ նահանգների դպրոցները ձրի են: ծնողները պէտք չունեն մինչև անգամ հոգալ իւրեանց մանուկների համար անհրաժեշտ բաները, այսինքն զրբեր և թղթեր և լին: Հասարակութեան կրթութեան համար նշանակուած դպրոցները շինուած են զարմանալի աշխատութեամբ: դպրոցական ճարտարապետութիւնը Ամերիկայում կազմումէ մասնաւոր զիտութիւն: Ըինութիւնները ընդարձակ են: սենեակները լուսաւոր, մաքուր օգբանուկ, զեռուցվումն մեծ զգուշութեամբ: Դպրոցները մանաւանդքաղաքներինը, ունեն շատ դպրոցի վերաբերեալ զրբեր որոնք նպաստումն ուսուցչին կատարելապէս աւանդելու իւր գասերը:

Այս ծախսերի համար նշանակուած գումարների աղբեւրը երկու են: Մի մասը տալիս է տէրութիւնը որը դորա փոխանակ, պարտաւորումէ բոլոր դպրոցներին ունենալ մի ընդհանուր ծրագիր և պահանջումէ մանրամասն հաշիւներ, որոնց հրատարակութիւնը, ծանօթացնումէ թէ կըրթութիւնը ի՞նչ զրութեան մեջ է իւրաքանչիւր տեղում: Այս գումարները որոնք անուանվումն school fund, կազմումն մի օղ, որը միացնումէ ժողովրդական կրթութեան այս ընդարձակ զրութեան բոլոր մասերը: առանց նորա չէր լինի նախագծերի միութիւն և կառավարութիւնը ոչինչ

ստուգատեսութիւն չեր ունենար այն առարկայի վերայ, որը շատ կողմերով պէտքէ հետաքրքիր լինէր նորան:

Սակայն օրէնսդրութիւնը չկամեցաւ զպրոցները յանձնել բոլորովին տէրութեան խնամքին: Նորա միակ նպատակն էր ցոյց տալ նորաստ զըսդոցներին, նոցա խրախուսել և խափանել որ խոռվութիւն և անկարգութիւն նոցա մէջ մուտ չգործեն: Մի անգամ այս նոպատակին հասան, ամերիկացիների ազատ ողին չմըղլազրեց այլ ևս կեղրոնական վարչութեան միջամտելու, նոցա վարդապետութեան հիմամբ անհարիւր սեփական շահին ամենալաւ և միակ դատաւորն ինքն է: Հասարակութիւնը իրաւունք չունի որոշել նորա գործունեութիւնը, բացի գուցէ այն դէպքից, երբ հասարակութիւնը կարևորութիւն է զգում նորա գործակցութեան: Երբ նորա ուղղութիւնը վեասակար է իւր համաքաղաքացիների համար: Տէրութեան նկատմամբ հասարակութիւնը համարւումէ նոյնպիսի մի անհատ հետեւաբար իւրաքանչիւր քաղաք իրաւունք ունի իւր զպրոցները իւր պիտոյքների և զրութեան համեմատ կարգի գնել, բայց մի պայմանով —նմանել կանոնադրութեան ընդհանուր սկզբունքներին: Քաղաքները անընդհատ գնումեն իւրեանց վերայ ամենածանր հարկեր: կառավարութեան տուած գումարների պակասութիւնը լրացնելու համար: Մասսաշուլգէմում տեղական հարկերը վեց անգամ առաւել են school fund —ից: Նիւ—Եօրգում, չնոյիելով նշանաւոր ծախսերին մայրաքաղաքի պահպանութեան համար կրթութեան համար նշանակուած գումարները կազմումն ծախսի հինգիրորդ մասը:

Հատ փոքր տարբերութեամբ զանազանուումն Ամերիկեան դաշնակցութեան զանազան նահանգների զպրոցների կազմակերպութիւնը, Անկարելի է մեզ այստեղ նկարագրել նոցա մանրամասնօրէն: բաւականամք միայն նոր Անգլիայում և մանաւանդ նիւ—Եօրգում և Բուտօնում տիրող սիստէմայի համառօտ նկարագրութեամբ: միանգամայն իմացնելով որ այս յօրինւածութիւնը չէ յարմարւում նոյն ճշգութեամբ Արևմուտքի գաւառներին: Խոկ հարաւը, որը կոտավարւումէր սկզբում զօրել ազնւականութեամբ և բաժանեցաւ երկու ահազին վիհով զատւած գասերի—անկարկների և ստրուկների—ոչինչ համեմատութիւն չէ ներկայացնում Հիւսիսի հետ:

### ԺԱՂԱՔՄԱՆ ՊԱՐԵՇՆԵՐԸ:

Ամերիկական դպրոցը հին Անգլիայի զպրոցների քոյլն կարելի է համարել, որի մերձաւոր նմանութիւնը երևումէ թէ մեթոսի, թէ ուսման միակողմանի լինելու և թէ հայրենասիրութեան մէջ: Հոլանդացիները, Գերմանացիները, Շվեյցները և Ֆրանսացիները աղղեցութիւն ունեցան միայն Ամերիկայի երկրի մշակութեան: վաճառականութեան և ձեռնարուեստութեան ծաղկման վերայ, բայց նորա զպրոցների, նորա կրթութեան վերայ այնշափ քիչ աղղեցութիւն ունեցան ինչ քան որ նորա օրե-

նսզրութեան բարոյից և սովորութիւնների վերայ. և լեզուի և մատենաւ պրութեան և ժողովրդական բնաւորութեան վերայ ունեցածից առաւել պահան.

Բայ ական է հետազօտել Ամերիկայի կրթութեան ու զղութիւնը. հասկանալու համար որ նա մեր հասարակութեանից չատ գերազանց հասարակութեան սկիզբն պէտք է զնէ. Common schools ները երբէք նման չն նորություն մեր ունեցած զպրոցներին. ոյնտեղ չեն զնում մինակ աղքատ մանուկներ և զպրոցները չեն սահմանափակում իւրեանց ծրագիրը տարրական գիտութիւններով. այս տարբերութեան վերայ մանաւանդ պարտուորենք ուշազրութիւն դարձնել. որովհետեւ նա ձգումէ մեծ լոյս Միացեալ նահանգների ժողովրդական և քաղաքական կազմակերպութեան վերայ.

Այս ուսումնարանները զանազան կարգերի են բաժանված որոնցից աշակերտը պարտաւորէ աստիճան աստիճան անցնել. նոցանից և ոչ մին զառարանական պարապմաւնքների իսկապէս շարունակութիւն է ներկայացնումն ուրամին միւսին լրացնումն ։ Չորսից մինչև հինգ տարեկան մանուկին բերումն ուրբախութեան ուրբախութեան ուրբախութեան ուրբախութեան կարգալ. գրել. համարել. երգել և կեանքի համար անհրաժեշտ մի քանի տեղեկութիւններ է ստանում. Այստեղից նա անցնումէ Երբեխութեան ուրբախութեան ուրբախութեան ուրբախութիւն հանրահաշիւ նկարչութիւն. գծագրութիւն. բնագիտութիւն. աշխարհագրութիւն. աստեղագիտութիւն. բառազննութիւն. վերլուծութիւն յաւնական և լատինական բառերի. կրկնութիւն թուաբանութեան. Անգլիական քերականութիւն և շարադրութիւն. տեսաբանագծութիւն. (ոչչայք) երգեցողութիւն. Միացեալ նահանգների պատմութիւն և տօմարակալութիւն. Այս փոքրիկ մտաւոր բեռներով ամրաւած աշակերտը մօտենաւմէ Երբեխութեան մուտքին. ուր քաղաքացու համար բաւական համարված կրթութիւնը պիտի վերջանայ. Այստեղ նա պարապումէ արդէն անդիմական մատենագրութեամբ. լսութեական լիզուով. չին և նոր ազգաց պատմութեամբ. բարոյագիտութեամբ. բնական գիտութիւններով. վերջապէս ֆրանսական և գերմանական լիզուներով. որոնց գասերը անպարտազիր են.

Հարկաւ. բոլոր մանուկները չեն ստանում լիակատար կրթութիւն. որը այդպէս առատօրէն արվումէ նոցա. նոքա. որոնց աշխատանքին իւրեանց ծնողները կարօտութիւն են զգում. տարրական զպրոցից բարձր շատ հազիւ են զնում. Այն տէրերը որոնց մօտ աշխատումն շատ երիտասարդ աշակերտներ պարաւոր են իւրաքանչիւր տարի գտնէ երկու. երեք տիս թոյլատրել նոցա լսելու հասարակական դասեր. Այսպիսի ընդհատ պարապմունքները ցոյց էին տալիս. որ շատ գոհացուցիչ հետևանքներ պիտի շառագացնէին. բայց ժողովրդական դասաւորութեան եռանողը այնպէս է որ. աղայքը իսկ այնտեղ ընդունակ են այնպիսի. ջանասիրութեան. այնպիսի մտաւորական աշխատութեան. որոնք սովորաբար անհամապատասխան են

նոցա հասակին և որոնք ամենայն իրաւամբ օտարականների զարմանքի արժանի են։ «Միացեալ նահանդներում»։ ասումէ պ. Փրեզեր։ որին Մեծն Քրիստոնի կառավարութիւնը յանձնած էր Նոր աշխարհի կրթութեան դրութիւնը քննելու։ աշակերտը որոշեալ ժամանակում երկու անգամց աւելի շատ տեղեկութիւն է ստանում քան թէ անզիփացին։ Պարապմունքների մէջ ցոյց տուած այս եռանդով է որ Ամերիկացիք կարողանումեն համաձայնեցնել ձեռնարուեստութեան պահանջները ժողովրդական կրթութեան համաձայնեցների հետ։ Դպրոց և գործարան գնումն ձեռք ձեռքի տուած։ և եթէ չկայ երկիր, ուր Փիզիգական աշխատանքը այնքան մէծ պատւի մէջ լինի։ չկայ և երկիր ուր կրթութիւնը լինի այդպէս ամենուրեք տարածուած։ Արչեստաւորը կամ հասարակ մի կին ունենում յաճախ այնպիսի մտաւոր զարգացում, որը կարելի էր յուսակ միայն հարուստներից և ուսումնառութեան բաւական ազատ ժամեր ունեցող անձից։ Պ. Ամպէր տեսաւ փոքրիկ Օհիո քաղաքում բազմաթիւն աշխատող կանանց որոնք հասակ առած մարդոց համար կարդացուած բընալունութեան դասերն էին լսում, Մի ուրիշ ձանապարհորդ, հարցնելով մատենագրարանսւմ Հոլանդիայի վերայ գրուած մի շատ նշանաւոր մատեան շատ զարմացաւ, երբ լսեց, թէ այդ գիբբը գտնուումէ մի լուսաբար կնոջ մօտ։ Նա գնաց այդ կնոջ մօտ խնդրելու նորանից զիրքը մի երկու օրուայ համար։

— Ոչ պատասխանեց կինը, — չվերջացրած չեմ կարող ձեզ տալ, շատ կարեոր է ինձ, բայց եթէ դուք այդքան կցանկոք կարդալ, ես կը ետաձգեմ քանի մի ժամով իմ գործոց և յետոյ կուղարկեմ ձեզ։

Այսպիսի դէպքեր յատուկ են։ Խրջանիկ է այն երկիրը ուր ժողովուրդը ոչ եթէ քատթար բնազգումներ ծնեցնող մատենագրութեան այլ միտքը ամրացնող և լուսաւորող լրջմիտ գրուածոց է կարօտում։

Սակայն, թէպէտ և Ամերիկացիները սիրումեն կրթութիւն և ձգտումն զէպի այն, բայց նոցա գործունէութիւնը պահանջումէ շափազանց շատ հօգսեր, որպէս զի նոքա կարողանան բացարձակ նուիրել իւրեանց զիտութեան։ Ես չեմ կարծում, զրումէ Տոկվիլ, որ կայ աշխարհումն մի ուրիշ երկիր, ուր բնակիչների համեմատաբար լինի այնքան քիչ ուսումնականներ և այնքան սակաւ տգէտներ։ ինչքան Միացեալ նաև հանգներում։

Ամեն քաղաքում ժողովրդական դպրոցների կառավարութիւնը գտնվումէ մի ժողովի ձեռք, որի անգամները ընտրվումն քուէարկութեամբ։ ամեն տարի նոցա երրորդ մասը պակասումէ։ Այս մարզիկը մեծ իշխանութիւն ունին, նոքա ուսուցիչ նշանակում են և հանում պաշտօնից, աշակերտների զամազրերը որոշումն։ Նայումն որ զպրոցների թիւը համապատասխանէ բնակիչների թուին։ բանումն նոր դպրոց եթէ անհրաժեշտ են տեսնում։ վերջապէս շինութեան հսկողութիւնը, դաստրանական պիտի ցնիքները, ջևառցումը նոյնպէս նոցա հոգացողութեան են յանձնված։

նշանաւոր քաղաքները բացի զայտական ունեն և դպրուելու վեհական որը ժողովի աշխատաթիւններին մասնակցումէ և որը իւր իշխանութեան տակ ունի մերից նշանակուած տեսուչներ։

Մի քանի տարի առաջ պյաքան գործունեայ հսկողութեան աւելացրին զարձեալ մի նոր միջոց վերահսկողութեան ։ Եւրաքանչիւր թաղ որոշումէ հինգ հօգաբարձուներ՝ trustees, որոնք պատասխանատու են զպրոցների կառավարութեան մասին թէպէտ և նոքա անվարձ են բայց իւրեանց պարտքերը կատարումեն միշտ միենոյն եռանդրվ ։ մարդիկ որոնց համար առանց որ և է փոխարեւութեան ժամանակը արդարեւ փող է ։ վաճառականներ փաստարաններ նուիրումն մի քանի ժամ աշակերտների ջանասիրութեանը և յառաջդիմութեանը համոզուելու համար ։ Հեշտ է հասկանալը թէ ինչպիսի գերազանց հետեւանքներ պիտի յառաջեցնէ այսպիսի ջերմ և եռանդրուն գործակցութիւնը ։

Ուսուցիչների զարգացումը և նոցա ճարտարութիւնը իւրեանց դասերը իւրեանց երիտասարդ ունկնդիւններին մատչելի անելու պակաս զովեստի արժանի չէ ։ Խեցպիսի ուսուցիչը նոյնպիսի աշակերտ մանուկները հեռ և ջանասէր են որովհետեւ զասատուները կարգանումն լինել հաստատանց խոտութեան համբերող առանց թուլութեան որովհետեւ նոքա պահպանումն կարգապահութիւն և միենոյն ժամանակ ուսումը զբարիչ են անում զիւրին պարտք ։ Ամերիկական ցեղը բնածին հակումն ունի զասատութեան իւրեանց գործի ազնուութեան մասին համոզուած լինելով ուսուցիչները յաննձվումն նորա ոգեւորութեամբ ։ Նոքա հպարտանումն իւրեանց յաջողութեամբ և աշխատումն պահպանել զպրոցների բարի համբաւը ։ Նոքա մտածումն որ տէրութեան համար նոր սերունդներ կրթելով ցոյց են տալիս իւրեանց հայրենասիրութիւնը ։ Նոքա ձգտումն ուսուցական տապարէզին նոյնպիսի եռանդրվ ։ ինչպէս ուրիշ տէրութիւնների մէջ պատերազմական ասպարէզին ։ Սակայն հարկաւոր դէպքում նոքա կարգանումն և զէնք կրել ։ Նոյն ոգեւորիչ հոգու մասին կարելի է դատել այն դէպքով որ վերջին պատերազմում միայն Բենսիլվանիայ նահանգում երեք հազար ուսուցիչ ինքնակամ զօրք զրգեցտն։

Յարգելով կրթութիւն յարգումն և ըստ արժանոյն նոյնը տուողին Խեղձ զիւղական ուսումնարանի ուսուցիչը այնպիսի հասարակական դրութիւն է ունենում ։ որը ոչինչով պակաս չէ մնում զատաւորների և բարձր պաշտօնատէրերի զրութենից ։ Աչ մի տեղ չէ երեսում և ստուերն իսկ այն ծաղրական արհամարհութեան որը երկար ժամանակ Եւրոպայում ունեին մանկավարժներ ։ Բայց պէտք և խոստովանել նոյնպէս որ Մօնղէնի սրամիտ երգիծաբանութիւնը կարելի չէ յարմարել նոր Անգլիայի զաստուններին ։ ինչպէս թուչուն սերմ են որոնում և տանումն կտուցով իւրեանց ձագուկներին չճաշակելով նորան ճիշդ այսպէս և մը իմաստակները յափշտակումն զիտութիւնը զրգերից և տեղաւորումն նորան միայն իւրեանց շըմների ծայրին երրեք չորսալով իւրեանց մաքի մէջ ։

Ամերիկայի սւսուցիչները աշխատումն կրթել մարդիկներին, նորա ինելքի և սրտին նոյնքան ուշազրութեան են գաղձնում որբան յիշողութեան: Այս պատճառով է որ նորա վայելումն միշտ սկը և յարգանք: Ամենատհարուստ ընտանիքները իսկ պատիւ են համարում տեսնել նոյն ասպարեզին մէջ իւրեանց մանուկներին: Ճոխ սեղանաւորները, ժողովի անդամները, յարգորումն իւրեանց զաւակներին դէպի ուսուցչական ասպարեզը, Շատ անգամ կարելի է տեսնել Քօստօնի ամենալնարեալ հասարակութեան մէջ տիկիններ, որոնք իւրեանց երիտասարդութեան երկու, երեք տարին անցուցած են զպրոցի կառավարութեամբ, որովհետեւ ոյսպիսի աշխատանքը համարվումէ գերազանց պատրաստութիւն մայրական վսիմ և ծանր պարտաւորութիւնների: Բայց պէտքէ ասել որ ուսուցիչների աշխատանքը վարձատրվումէ ըստ արժանույն: Շատ քիչ ուսուցիչ և ուսուցուհի պատահումէ որ տարեկան 2000 դոլարից (4,000 բուբլուց) պակաս ստանայ: Իսկ զպրոցների մեծաւորների տարեկան վարձը, մի քանի դէպքերում համարվումէ միշտ 5,000 դոլարի, այսինքն 10,000 բուբլու:

Եւրոպացիներին հակառակ, որոնք կանանց մանկավարժական տաղանդին միջակ յարգանք են ընծայում և որոնք գուցէ թերի կհամարեն իւրեանց աղջկանց կրթութիւնը մինչև որ նոցա շյանձննեն ուսուցիչների: Ամերիկացիները մտածումն որ այր մարդը, երիտասարդութեան ընտիր ուսուցիչ չէ. Նա չունի ուսուցչի անհրաժեշտ համբերութիւնը և քաղցրութիւնը, նորա ձեռները չափազանց կոպիտ են առաջնորդելու մանուկի փափուկ հոգուն: Ընդհակառակը, բնութիւնը կարծես թէ կամցած է կնոջ մարդկութեան գասահարակ ստեղծել, բնութիւնը պարգևել է նորան ողջամիտ սկը, որը կարգանումէ սրտի խորքերը թափանցել որը ուղղումէ առանց բռնութեան: Որը երկիւղ չափազանցութեան և յարգելու է վարժեցնումէ սրտերը: Որքա՞ն արգելքներից հարկաւոր է խուսափել ուսուցութեան գժուար ասպարեզին մէջ: Որքա՞ն աշխատութիւն հարկաւոր է գործ գնել որ մանուկների թարմ մտքերը մեր վշտերի և տհաճութիւնների ազգեցութեան շենթարկուին: Որքա՞ն պէտքէ հաւատարմութիւն, լիովին նոցա ընդունակութիւնների, նոցա ձգտութերի քննութեան յանձնվելու համար: Նոցա առ բարին ուղելու համար շափազանց շատ հոգսեր ալեկոծումն այր մարդին, որ կալողանայ կատարել միշտ յաջողութեամբ այսպիսի գործ, մինչդեռ ոյզդ ամենը յատուկ են կնոջ: Բոլոր ազնիւ և վեհանձն ձգտութերի հասած նոքա կարողանումն նոցանով ոգեսորել ուրիշներին, աստուածասէր և մաքուր մինելով, նորա ազգումն սկը առ կրօնը ուսուցանումն յարգել բարոյականութիւնը: մինչև անգամ յափշտակութիւնը, որի նկատմամբ կշտամբումն նոցա, կատարելապէս բնական է և երիտասարդական հասկին: Լաւ է 20 տարի յափշտակութիւնների ընդունակ լինել, քան ծերերի ցուրտ և անօգուտ տհաճութիւնը ունենալ:

«Անկարելի է, ասումէ նիւ—Եօրդ նահանդի ժողովի հաշիւներից մին, ըստ արժանային գնահատել կանանց ուսուցչութեամբ մեր դպրոցների վերայ եղած բարերար ազդեցութիւնը, նոքա իւրեանց բնութեան քընքշութեամբ աւելի հզօր են քան թէ մարդիկ իւրեանց նորոգիչ տէօրիոյով, իմիստ կանոններով, հաստատուն զրութիւններով. նոցա քաղցրութիւնը յաղթումէ խռովարար հոգուն, որը խստութիւնը միայն կզայրացնէ, նոցա համոզուկան յանդիմանութիւնները աւելի լաւ կներգործեն, քան թէ ճիշդ տրամաբանական խրատները»:

Սորանից կչետեկի<sup>9</sup> արգեօք որ Ամերիկացիները անսխալական են իւրեանց կրթութեան հարցի վերայ ունեցած հայեացքում, Մենք մեր կողմից լաւ ենք համարում այն զրութիւնը որով մանուկների կրթութիւնը յանձնվումէր կանանց, Բայց շխօսելով արդէն այն մօրուսաւոր աշակերտների մասին, որոնց ներկայութիւնը երիտասարդ վարժուչու ունկնդիրների մէջ, մեր գաղափարներին անյարմար է երևում, ցցց տանք մի պակասութիւն զպրոցների որի պռաջը առնումեն հետզհետէ, այդ պակասութիւնը տարրական ուսումնարաներում պարապող երիտասարդ օրիորդների անփորձութիւնը պիտի համարւի որը խափանումէ ամերիկական ուղղութեան տալ այն բոլոր պառուղները, որոնցու ըստ երկայթին, նորա սկզբունքի ընդարձակութենից և արդիւնաւորութենից կարելի էր սպասել, Տարրական ուսումնարանը կառավարող վարժուչուց, քիչ կրթութիւն է պահանջվում, և հարկաւ նորան քիչ հարկաւոր է, մանուկներին ամենատարրական գաղափարներով ուսուցանելու համար. Բայց որքան և համեստ լինեն այս պարապմունքները, նոքա այնու ամենայնիւ պահանջումն փոքր ինչ իմաստութիւն, մի որոշ յաջորդութիւն գաստաւութեան գճի մէջ, որին, նոր զպրոցից ելող 17 տարեկան վարժուչին շատ քիչ լինումէ ընդունակ, Խնչպէս մի մարդ իւր երիտասարդական հասակի մէջ ստացած տապաւորութիւնների հետքերը կրումէ միշտ իւր վերայ, այսպէս և կրթութեան բոլոր ընթացքի վերայ մնումէ սկզբնական կրթութեան տուած սիսալ ուղղութիւնը, Մի քանի նահանգներում, մանաւանդ Քոստոնում, այս բանիս համոզել սկսան, Հասարակական կրթութեան ժողովը սկսեց ենթարկել միատեսակ քննութեան բոլոր ուսուցիչներին ու նշանակել հաւասար վարձ և ժամանակից սկսած մտաւ մի կատարեալ յաջորդութիւն գասերի մէջ.

(Աշակերտութիւն):

Ա. Զ.

ԸՆՏԱՆԻ ՔԻ ԱԶԴԵՑՈՒԹԻՒՆ.

(Ամայլուց):

(Յուրաքանչյուր ամառ Արմենիա Յունիոն 1881):

Նէպիրները բաղդաւոր էին իւրեանց ձնողների կողմից, մանաւանդ մօր կողմից, Լէտի Սառայ Լէնօկսը աշխատումէր իւր որդիների մանկութեան